ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԻ ԱՆՎԱՆ Թ. 44 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան, Մ.Ավետիսյան 89

հեռ.+374 (010) 24 19 41
էլ.հասցե yerevan44@schools.am

Էլ - 46

«18» սեպտեմբերի 2023թ

ՀՀ ԿԳՄՍ
Գլխավոր քարտուղար
տիկին Հ.Հակոբյանին

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «Երևանի Հրանտ Դինքի անվան թիվ 44 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում առաջացել է «ՆԶՊ» առարկայի ուսուցչի թափուր մեկ տեղ:

Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարությունը:

Հր. Դինքի անվ. թ.44 հիմն. դպրոցի տնօրեն՝ /Ա.Պետրոսյան/

Մրցույթ՝ «Երևանի Հրանտ Դինքի անվան հ.44 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «ՆԶՊ» (6 դասաժամ, 1 հաստիք) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023թ. սեպտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 3**-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ին**, Երևանի Հրանտ Դինքի անվան հ.44 հիմնական դպրոցում, հասցե՝ ք.Երևան, Մինաս Ավետիսյան 89 շենք: Տեղեկությունների համար զանգահարել (010) 24-19-41 հեռախոսահամարներով: